

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/23**

«04» 11 2022թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 01.09.2022թ. N 1381-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:



2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 5 հավելվածով (Աղյուսակներ N 1 և N 2) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 28 800 000 (քսանութ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման հաշվետվության ներկայացման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011037646  
ՀՎՀՀ 02565827  
Գլխավոր քարտուղար՝

  
Ս. Մկրտչյան  
(ստորագրություն) Կ.Տ



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ  
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա  
«Հայթիզնեսթանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1150009355815863  
ՀՎՀՀ 01528652  
Տնօրեն՝

  
Վ. Վարդանյան  
(ստորագրություն) Կ.Տ





**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

«Ղրամ»

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ղրամ»	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը
1	71351540/54	«Ղրամ»	28 800 000	1	«Ղրամ» Կոտայքի մարզի Հրազդան համայնք	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ
<b>Տեխնիկական բնութագիրը</b>						
1	<b>Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>					
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ խորհրդատվական ծառայության մատուցում՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն					
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b>					
	Կից ներկայացվող Ծավալաթերթով նախատեսված աշխատանքներ					
3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>					
	Տեխնիկական հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն Հավելված 4-ի					
	Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ՝ ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էներգետիկի, ճարտարագետ-էլեկտրիկի, ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից՝ յուրաքանչյուր իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար:					
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:					
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:					
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:					
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, <b>ամենամյա</b> հաշվետվությունների ներկայացում: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն ոչ ուշ քան շինարարական աշխատանքները սկսելու օրվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա մինչև ամսի 5-ը: Ընդ որում, առանձին տեսակի շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունը մատուցվում է պատասխանատու անձանց՝ համապատասխան որակավորմամբ մասնագետ-հսկիչների կողմից:					
	1. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ:					

<p>2. Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությանը համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում:</p> <p>3. Օբյեկտի շինմնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատուն- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսներով և միջոցներով իրականացնի կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի ) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով:</p> <p>– Լաբորատոր փորձարկումների քանակը, ձևերը և մեթոդաբանությունը պետք է իրականացվեն համաձայն պատվիրատուի պահանջի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի:</p> <p>– Նշված փորձարկումները պետք է ապահովեն տվյալ օբյեկտի համար նախատեսված փորձարկման ենթակա աշխատանքների և առանձին տեսակի նյութերի ամբողջ ծավալը:</p> <p>4. Օբյեկտի ավարտից հետո՝ խորհրդատուն պետք է ներկայացնի շինաշխատանքների ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:</p>	
Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:	
Պատվիրատուին ներկայացվող ամսական հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկատվություն կապալառուի/շինարարական կազմակերպության/ շինարարական աշխատանքներ իրականացնելու անկարողության մասին՝ նշելով չաշխատած օրերի քանակը, դրանց պատճառները, եթե այդպիսիք առկա են:	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը	Շինմնտաժային աշխատանքների ավարտի հետ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝**

«Հ քաղաքաշինության կոմիտե»  
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
 կառավարական տուն 3  
 ՀՀ ֆինանսների նախարարության  
 աշխատակազմի գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011037646  
 ՀՎՀՀ 02565827  
 Գլխավոր քարտուղար

  
 Ա. Մկրտչյան  
 (ստորագրություն)



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ  
 ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա  
 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 1150009355815863  
 ՀՎՀՀ 01528652  
 Տնօրեն՝

  
 Ա. Վարդանյան  
 (ստորագրություն)



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«Վրաս»

		Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	71351540/54	«ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն»												6 120 300	6 120 300	6 120 300

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝**

«ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
 կառավարական տուն 3  
 «ՀՀ ֆինանսների նախարարության  
 աշխատակազմի գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011037646  
 ՀՎՀՀ 02565827  
 Գլխավոր քարտուղար՝

Ս. Մկրտչյան  
 (ստորագրություն)



**Կ Ա Տ Ա Ր ՈՂ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ  
 ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա  
 «Հայքիզնետրանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 1150009355815863  
 ՀՎՀՀ 01528652  
 Տնօրեն՝

Ա. Վարդանյան  
 (ստորագրություն)



Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը  
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության աշխատանքների մեթոդաբանություն**

**ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ:

Մսուր - մանկապարտեզի շինարարական աշխատանքները ներառում են.

➤ Համաշինարարական աշխատանքներ (հողային, ե/բ կառուցվածքներ, տանիք, արտաքին և ներքին հարդարման, ջեռուցման, օդափոխության տաք և սառը ջրի մատակարարման ցանց, լուսավորման ցանց, կոյուղի, հրդեհի ահազանգման համակարգի կառուցման և այլ աշխատանքներ)

➤ Նախագծվող մանկապարտեզը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոցի 55 հասցեում: Մանկապարտեզի հողատարածքը կազմում է 0,82869 հա: Շենքի կառուցապատման մակերեսը 1352 քմ: Ընդհանուր մակերեսը 1293 քմ:

➤ Նախագծվող մանկապարտեզի մասնաշենքը մեկհարկանի է 24,9մ x 74,1մ արտաքին չափսերով: Այն իրականացված է մոդուլային շինարարության սկզբունքով, այսինքն այլ տեղ կիրառելու դեպքում հնարավորություն կա ավելացնել կամ պակասեցնել խմբային բջիջները ըստ երեխաների պահանջվող քանակի, կամ փոխել խմբային բջիջների դիրքը ելնելով ինտոյացիայի պահանջից: Մանկապարտեզը ունի վեց խմբային բջիջներ՝ երկու հատ մսուրային, չորս հատ՝ նախադպրոցական:

➤ Կառուցի հենակմախքը մետաղական է: Հիմքերը՝ երկաթբետոնից, ժապավենային: Արտաքին պատերը իրականացված են 100 մմ հաստության սենդվիչ-սալերից:

➤ Շինարարական աշխատանքների ժամանակահատված 9 ամիս:

➤ Նախատեսվում է տեղադրել ֆոտովոլտային և արևային համակարգի սարքավորումներ:

➤ Հաշվի առնելով շինության մետաղական տարրերը, իրականացվելու է եռակցման կարանների և հանգույցների տեսողական զննումները և անհրաժեշտության դեպքում ուլտրաձայնային փորձարկումները:

Մեր ընկերության տեխնիկական հսկողություն իրականացնող անձնակազմը բավականին մեծ է, ըստ այդմ շին հրապարակում աշխատանքների հսկման գործընթացը անխափան իրականացնելու համար անհրաժեշտության դեպքում տեղամասի նշանակված տեխսիկիչներից ցանկացածը կարող է փոխարինվել համարժեք որակավորում ունեցող անձով:

**1. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ՀԱՆՈՒՅԹ, ՀԱՐԹԵՑՈՒՄ և ՀԵՏԼԻՑՔ)**

Այս բաժնում ընդհանուր նկարագրվում են այն հողային աշխատանքները, որոնք կապված են հանույթի, հողային պաստառների հարթեցման կամ հետլիցքի աշխատանքների հետ:

Հողային աշխատանքների հետ կապված հետազոտությունները և լաբորատոր փորձարկումները միտված են ստուգելու և հավաստելու կատարված աշխատանքների համապատասխանելիությունը հաստատված նախագծերին, տեխնիկական մասնագրերին և մասնավորապես ծրագրի երկրաբանական հաշվետվության առաջարկություններին:

Գրունտը, որպես փոփոխական նյութ շատ զգայուն է խոնավության տատանումների նկատմամբ, և կարիք ունի հատուկ ուշադրության նախագծա-նորմատիվային փաստաթղթերի համապատասխան որակ ստանալու համար: Ըստ դրա գրունտների լաբորատոր փորձարկումները պետք է դառնան հողային աշխատանքների անբաժանելի մաս, որպես ցանկալի որակ ապահովելու երաշխավոր:

Հողային աշխատանքների հետ կապված որակական չափանիշեր ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել հաստատված հատակագծերը, մասնագրերը և երկրաբանական հաշվետվությունը:
- Կատարի նշումներ շին հրապարակում աշխատող շինարարական տեխնիկայի վերաբերյալ:
- Լաբորատոր կամ դաշտային փորձարկումների միջոցով ստուգել հանույթի նախագծային ամենացածր նիշի գրունտների կրողունակությունը:
- Լաբորատոր փորձարկումների միջոցով ստուգել հետլիցքի գրունտների դասկարգումը և նրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերի պահանջներին:
- Ստուգել հետլիցքի կամ հարթեցնող շերտի նյութի որակական համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին, խտությունները և շերտերի հաստությունները (հզորությունները):
- Մասնակցի նմուշառման աշխատանքների և ստուգել որ հողային պաստառի, հանույթի հետլիցքիկամ այլ հանքերից բերված հետլիցքի գրունտների նմուշները առաքվել են նյութերի փորձարկման լաբորատորի:

### 1.1 ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Լաբորատոր փորձարկումները ներառում են.

- Որոշել գրունտի նմուշների հատիկաչափական կազմը և ստուգել գրունտի այլ հատկություններ, ըստ տեղամասի տեխնիկական հսկիչի կամ Պատվիրատուի պահանջով:
- Որոշել գրունտի օպտիմալ խոնավության և չոր խտության կապը կամ այլ փորձարկումներ եթե պահանջվում է:
- Դաշտային պայմաններում որոշել հետլիցքի նյութի խտացման աստիճանը:
- Տեղամասի տեխնիկական հսկիչի ցուցումներով պարբերաբար ստուգել հանույթի հետլիցքի գրունտի որակական հատկանիշները:

### 2. ԲԵՏՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երկաթբետոնյա կառուցվածքների բետոնի որակի վրա վրա ազդում են մի շարք գործոններ: Ըստ դրա որակի հսկողությունը բաժանվում է երկու փուլի.

• Շին հրապարակ բերվող բետոնը ստուգվում ստանդարտ լաբորատոր փորձարկումների միջոցով և ստացված արդյունքները համեմատվում են նախագծային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի պահանջների հետ:

• Բետնացման աշխատանքների պատշաճ իրականացում և բետոնի խնամք:

Բետոնային աշխատանքների հետ կապված որակական չափանիշներ ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է ստուգել.

• Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի համապատասխանելիությունը, նորմատիվային փաստաթղթերի հետ:

• Մասնակցել բետոնի կազմի ընտրության աշխատանքներին ըստ անհրաժեշտության:

#### 2.1 ՎԻԶՈՒԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր ստուգել.

• Կաղապարների չափերի և ձևերի համապատասխանելիությունը:

• Կաղապարների մաքրությունը և խնամքը համապատասխանում են ներկայացվող պահանջներին մինչև բետոնի լցնելը կաղապարների մեջ :

• Ստուգել շինհրապարակ առաքված բետոնի կոշտությունը:

• Ստուգել բետոնի ջերմաստիճանը և այլն:

• Բետոնի նմուշառման աշխատանքների համապատասխանելիությունը նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:

### 3. ԱՄՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երկաթբետոնե կառուցվածքներում օգտագործվող ամրանի շարունակական կամ պարբերական ստուգումները պետք է հավաստեն մատակարարի արտադրանքի համապատասխանելիությունը նախագծային, նորմատիվային կամ տեխնիկական մասնագրերի պահանջներին: Այս աշխատանքները իրականացվում են որակի հսկիչի (վիզուալ դիտարկումներ) և նյութերի փորձարկման լաբորատորիայի հետ համատեղ:

#### 3.1 ՎԻԶՈՒԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր ստուգել.

• Շինհրապարակ առաքված ամրանային ձողերի յուրաքանչյուր խմբաքանակի չափերը և դասը ըստ մասնագրերի կամ նախագծի:

• Լաբորատոր փորձարկումների միջոցով ստուգել ամրանների համապատասխանելիությունը ըստ արտադրանքի տեխնիկական մասնագրերում նշվող պահանջներին:

• Վիզուալ ստուգել շին հրապարակ առաքված ամրանների մակերևույթները:

• Կաղապարներում ամրանացանցերի տեղադրման ընթացքում ստուգել դրանց ուղղությունները, եռակցվող հանգույցները և այլն:

• Կաղապարներում ամրանացանցերի տեղադրելուց հետո և բետոնի լցնելու ընթացքում ստուգել, որ ամրանացանցը հատատուն դիրքում է և ամրացված է բավարար չափով:

• Մասնակցել նմուշառման աշխատանքներին և հետևել որպեսզի նմուշները պատշաճ կերպով առաքվեն փորձարկման լաբորատորիաներ:

### 4. ՔԱՐԻ ՇԱՐՎԱԾՔ

Ըստ այս տեսակի աշխատանքների բնույթի լաբորատոր փորձարկումները ներառում են.

• Քարի շարվածքների կամ բետոնե աղյուսների որակի ստուգում և դրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին:

- Լցանյութային կամ կապակցող խառնուրդների նյութերի (ցեմենտ, ավազ, անկեռային ձողեր, խիճ) համապատասխանելիությունը մասնագրերին և այլն:

## 5. ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ներքին հարդարման աշխատանքները իրենց ծավալով և տեսակով ներկայացված են նախագծային փաստաթղթերում: Այս աշխատանքները իրենց մեջ ներառում են հատակի ցեմենտ-ավազե հարթեցնելու շերտերը, պատերի հարդարումը տարբեր տեսակի մածիկներով, գաջի աշխատանքները և այլն:

Այս աշխատանքների իրականացման ընթացքում որակի պատասխանատու տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել աշխատող անձնակազմի որակավորումը:
- Ստուգել և անհրաժեշտության դեպքում (նյութերի փորձարկման լաբորատորի ուղարկել) հարդարման համար նախատեսված նյութերի համապատասխանության սերտիֆիկատները:
- Վիզուալ ստուգել հարդարվող մակերևույթների ողորկությունը և հայտնաբերված թերությունների դեպքում տալ համապատասխան ցուցումներ դրանց վերացման համար:

## 6. ԻՆՏԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

Այս աշխատանքները իրականացնելու ընթացքում համապատասխան որակավորում ունեցող որակի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

• Մասնակցել շին հրապարակ նեմուծված ապրանքների (տարբեր տեսակի խողովակներ և դրանց կցամասեր, օդափոխության համակարգեր, էլեկտրական սարքավորումներ և այլն ) հանձնման ընդունման աշխատանքներին:

• Ստուգել դրանց համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին և տեխնիկական մասնագրերին:

- Ստուգել դրանց մոնտաժման աշխատանքների որակական հատկանիշները:
- Թերությունների հայտնաբերման դեպքում տալ համապատասխան ցուցումներ:
- Ստուգել ջերմամեկուսիչ նյութերի ջերմահաղորդականության գործակիցը:

## 7. ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս աշխատանքները իրենցից ներկայացնում են շինության հարակից տարածքում նախատեսված բարեկարգման աշխատանքների անբաժանելի մաս: Սրանց թվում են շինության մոտեցնող ավտոճանապարհները, բակային տարածքները, խաղահրապարակները և այլն:

Այս տեսակ աշխատանքների հսկողությունը կայանում է ասֆալտաբետոն փոռող անձնակազմի որակավորման և շփրապարակ բերվող ասֆալտաբետոնը մատակարարող ընկերության արտադրանքի համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին:

Տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է ստուգել.

- Ստուգել հաստատված զճագրերը և տեխնիկական մասնագրերը
- Ստուգել նյութերի սերտիֆիկատները և դրանց համապատասխանելիությունը

### 7.1 ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Մասնակցել լաբորատոր փորձարկումների համար իրականացվող նմուշառման աշխատանքներին
- Մասնակցել ասֆալտաբետոնի կազմի ընտրության լաբորատոր փորձարկումների աշխատանքներին
- Լաբորատոր փորձարկումների տվյալներով ստուգել ասֆալտաբետոնի ծածկի ներքևի հողային շերտերի համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերի պահանջներին և այլն

## 8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Տվյալ ժամանակահատվածում Կապալառու ընկերության կողմից իրականացված փաստացի աշխատանքների ծավալները ստուգվում են Կապալառու ընկերության ներկայացուցչի (աշղեկ և այլն), որակի տեխնիկական հսկողություն իրականացնող թիմի ներկայացուցչի և ըստ ցանկության պատվիրատուի ներկայացուցչի մասնակցությամբ: Ստուգված ծավալների հիման վրա Կապալառու ընկերությունը կազմում է կատարողակ ակտ, որին պարտադիր կցվում են ծածկված աշխատանքների ակտերը (եթե համապատասխան աշխատանք իրականացվել է), լաբորատոր փորձարկումների արձանագրությունները (եթե տվյալ ժամանակահատվածում իրականացվել են) և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Հավաքագրված փաստաթղթերը պահանջված օրինակների քանակով սահմանված ժամանակամիջոցում հանձնվում են պատվիրատուի ներկայացուցչին:

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱՉՂԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄՈՂՈՒԼԱՅԻՆ ՏԻՊԻ 144 ՏԵՂ  
ՀՉՈՐՈՒԹՅԱՄԲ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐ  
ՓՈՐՁԵՐԻ ՊԼԱՆ**

Հողային աշխատանքներ			
Սկարագրություն	Չ/Մ	Ծալաթերթի ծավալ	Ըստ շերտերի
1	2	3	4
Գրունտների հետլիցքի տոփանման աշխատանքների հետ կապված լաբորատոր փորձարկումներ	մ <sup>3</sup>	2335	55
Հիմքեր			
